ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. մարտի 13-ից մարտի 18-ը ք.Նագպուր (Հնդկաստանի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

- Նարինե Ֆահրադյան
- Վարդան Բաբայան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

- ՀՀ ՊԵԿ Միջազգային համագործակցության վարչության հարկային համագործակցության բաժնի գլխավոր հարկային տեսուչ,
- ՀՀ ՊԵԿ Հարկային համալիր ստուգումների վարչության թիվ 3 բաժնի գլխավոր հարկային տեսուչ:

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Հնդկաստանի Հանրապետություն, ք.Նագպուր, մարտի 14-ից 17-ը

4. Հրավիրող կողմը՝

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի քարտուղարություն, Հնդկաստանի ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտեի և Նագպուրի Ուղղակի հարկերի ազգային ակադեմայի կողմից՝ ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի «Ասիայի նախաձեռնություն»:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր՝ մասնակցել «Անդրսահմանային գործարքների ստուգումներ. Տեղեկությունների փոխանակման կարևոր դերը» խորագրով ուսումնական միջոցառմանը: Մասնակիցներին ներկայացվել է տեղեկությունների փոխանակման և թափանցիկության գործիքակազմը, ինչպես նաև հարկային ստուգումների որակի բարձրացման առաջավոր փորձը և անդրսահմանային գործարքների միջոցով հարկերից խուսափելու դեմ արդյունավետ պայքարի գործընթացը: Մասնակիցները ուսուցանվել են արդյունավետ օգտագործելու տեղեկությունների փոխանակման ենթակառուցվածքը՝

պայմանագրային գործընկերներին ուղարկվող հարցումների որակը բարձրացնելու նպատակով:

6. Քննարկված թեմաները՝

Ս/թ մարտի 14-ից 17-ը կայացած «Անդրսահմանային գործարքների ստուգումներ. Տեղեկությունների փոխանակման կարևոր դերը» խորագրով ուսումնական միջոցառման ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր, այդ թվում.

- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի կողմից մշակված հարցման հիման վրա հարկման նպատակով տեղեկությունների փոխանակման ընդհանուր կառուցվածքը,
- Ստուգողների համար ընդհանուր հաշվետվողական համակարգի (Common Reporting Standard (CRS) կիրառման արդյունավետությունը,
- Հարկային ստուգումների իրականացման ժամանակ ավտոմատ տեղեկությունների փոխանակման համակարգի կիրառման վերաբերյալ փորձի փոխանակում,
- Հարցման հիման վրա հարկման նպատակով տեղեկությունների փոխանակման գաղտնիության համակարգի կիրառման առանձնահատկությունները,
- Հարկման նպատակով տեղեկությունների փոխանակման հարցման կազմում (գործնական խմբային աշխատանքներ՝ փաստացի օրինակներով):

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Միջացառման ժամանակ որպես դասավանդողներ հանդես են եկել ՏՀԶԿ Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի ներկայացուցիչները: Միջոցառմանը մասնակցում էին ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի «Ասիայի նախաձեռնության» մասնակից պետություններից Հայաստանի Հանրապետության, Հնկաստանի Հանրապետության, Մալդիվների Հանրապետության, Ինդոնեզիայի Հանրապետության, Մալայզիայի, Թաիլանդի Թագավորության հարկային մարմնի ներկայացուցիչները, քննարկվել են «Անդրսահմանային գործարքների ստուգումներ. Տեղեկությունների փոխանակման կարևոր դերը» դասընթացին հետաքրքրություն առաջացնող հարցեր: Դասընթացը ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի «Ասիայի նախաձեռնության» շրջանակներում կազմակերպվող անդրանիկ միջոցառումն էր, որի վերաբերյալ Նախաձեռնության կողմերը պայմանավորվել են 2022թ. սեպտեմբերի 1-2 Ինդոնեզիայում կայացած 2-րդ բարձրաստիճան գագաթաժողովի ընթացքում:

Միջոցառման ընթացքում ներկայացվել են գործնական կիրառմանն առնչվող շնորհանդեսներ, ելույթ են ունեցել բոլոր պետությունների ներկայացուցիչները, ներկայացնելով՝ երկրում կիրառվող տեղեկությունների փոխանակման գործընթացը, ինչպես նաև Ինդոնեզիայի Հանրապետության և Մալայզիայի ներկայացուցիչները ներկայացրել են հարկային մարմնի փորձը տեղեկությունների ավտոմատ փոխանակման գործում և դրա արդյունավետ կիրառման ուղիները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման արդյունքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել առաջիկա դասընթացների և համաժողովների կազմակերպման մասով, որոնք ուղղված կլինեն ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի «Ասիայի նախաձեռնության» երկրների միջև համագործակցության բարելավմանը, տեղեկատվության արագ և օպերատիվ փոխանակմանը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Առաջիկա դասընթացները և համաժողովները կազմակերպվելու են ՏՀԶԿ Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի քարտուղարության և ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի «Ասիայի նախաձեռնության» կողմից: Միջոցառմանը մասնակցելը թույլ տվեց ՊԵԿ ներկայացուցիչներին բարձրացնել ՊԵԿ-ում կատարվող համապատասխան աշխատանքների որակը, նույնականացնել լավագույն միջազգային փորձը՝ ՀՀ-ում ներդրելու նպատակով, ներկայացնել և ավելի ճանաչելի դարձնել Հայաստանի փորձը միջազգային փորձագիտական հանրույթում, հաստատել միջազգային կապեր համապատասխան ոլորտի օտարերկրյա գործընկերների և փորձագետների հետ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

21.03.2023թ